ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023 թ.

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ԳԱՌՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 30.10.2023թ. թիվ 087/5432-2023 գրության

Հարգելի պարոն Դանիելյան

ՀՀ Լոռու մարզում ժամանակավոր բնակեցվել են Լեռնային Ղարաբաղից տարահանված շուրջ 5100 անձ, որոնք տեղավորվել են հյուրանոցներում, հյուրատներում, անհատ բնակարաններում, պետական և համայնքային հաստատություններին պատկանող տարածքներում: Նրանց սոցիալական խնդիրները լուծելու համար ՀՀ կառավարության 28.09.2023թ. թիվ 1657-Ն, 05.10.2023թ. թիվ 1715-Ն, 17.10.2023թ. թիվ 1765-Ն, 26.10.2023թ. թիվ 1861-Ն որոշումներով ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմին հատկացվել է 400.0 մլն. դրամ, որից՝ «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով՝ 20.0մլն. դրամը, «Այլ նպաստներ» հոդվածով՝ 62.0 մլն. դրամ, «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով՝ 318.0մլն դրամ: «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով հատկացված գումարների ծախսման համար «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կնքվել է գնման 5 պայմանագրեր, համաձայն որի ձեռք է բերվել 1345 փաթեթ և համայնքների միջոցով բաշխվել է տարահանված բնակչությունը: Փաթեթների մեջ ներառված են սննդամթերք և առաջին անհրաժեշտության պարագաներ:

«Այլ նպաստներ» հոդվածով տրամադրված գումարներով կարգավորվում և լուծվում են բազմաթիվ խնդիրներ՝ տարահանված բնակիչների սոցիալական հարցերի լուծման համար: Տարբեր կազմակերպությունների միջոցով գնվում և տրամադրվում են տարահանված բնակիչներին նյութական օգնություններ՝ սննդամթերք, առաջին անհրաժեշտության ապրանքներ, դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքներ, մանկական տակդիրներ, անկողնայի հավաքածուներ, կենցաղային տեխնիկա, կենցաղային ապրանքներ և այլն:

«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով հատկացված գումարները համաձայն կնքված պայմանագրերի հատկացվում են հյուրանոցներին և հյուրատներին՝ մատուցված ծառայությունների համար: Վճարման աշխատանքները ընթացքի մեջ են:

2023 թվականի նոյեմբերի 3-ի դրությամբ հատկացված գումարներից ծախսվել է 213.1 մլն. դրամ:

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4-34 99

Տարահանված բնակիչների մի մասը ժամանակավոր բնակեցվել են նաև պետական և համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում՝ ՎՊՀ-ի մարզաառողջարանային հանգրվան (Փամբակ համայնք), Տաշիրի վիճակագրական վարչության շենք (Տաշիր համայնք), «Տաշիրի N1 ՆՈՒՀ»ՀՈԱԿ (Տաշիր համայնք), տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոն(Վանաձոր համայնք), Վանաձորի ընտանիքի և երեխաների աջակցման կենտրոն(Վանաձոր համայնք):

Հարգանքով՝

06/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4-34 99